


ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարկային գինը կ'օգտագործվի 8 ՄԷՃ:
Գումարային — 10 ՄԷՃ:
Լեզուային — 4 ՊՊՈՅՈՒՆ — 4 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:
Գումարային — 3 ՄԷՃ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԶԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԶԱՆՈՒՄ 13 ՕԴՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քանի մ'օրէ 'ի վեր պատերազմա-
կան լուրերը կարեւորութենէ դուրկ
են. միայն յառաջապահաց մանր կը
ուրեւրեն կրծմանըստեն. Ռուսը տա-
կաւին շարժմաննայն չեն ցուցներ, և
իրենց օգնութիւններուն սպասելով
կը վերակազմին: Դարուս ամենէն ա-
րիւնդուտ պատերազմներէն մին հա-
մարուած Բլեյքուայի ճակատամարտէն
Ռուսաց բանակին կրած անդամա-
լուծութիւնը տակաւին կը շարունա-
կէ: Պատերազմական արհեստին հը-
մուտ անձերէ ոմանք այս ճակատա-
մարտին չէին ուզեր կարեւորութիւն
տալ, և կրկարձէին թէ Ռուսը կրնա-
լին տակաւին իրենց երկու կողերուն
սպառնալով Օսմանեան զօրութիւնն
արհամարհելով դէպ Սկրիանուպօլիս
յառաջ խաղալ, առանց հոգ ընելու
թէ իրենց հաղորդակցութեան գիծե-
րը կրնային խղիւ: Բայց այսպիսի ըն-
թացք մը բանաւորապէս անկարելի էր:
Փորձառութեամբ հաստատուած պա-
տերազմական կանոնները զանց ընե-
լուն հետեւանք ծանր պարտութիւն
միայն կրնար ըլլալ: Կը պնդէին նա-
և թէ Ռուսը իրենց պարտութենէն
երկու օր վերջը պիտի կրնային նո-
րէն յարձակիլ, բայց իթէ կարենա-
լին 'ի' իրենց համար ամենակարեւոր էր
այն յարձակումն ընել: Ռուսը առ-
այժմ օգնութեան կ'սպասեն, և բա-
րեաղդաբար Օսմանցիք անոնց վրայ
չեն յարձակիլ: Կերեւի թէ Ռուսաց
ներկայ ընթացքն աւելի շրջահայեցու-
թեան վրայ հիմնեալ է, և թէ ոչ ևս
յառաջ պիտի խաղան իրենց երկու կող-
մէն եղած սպառնալից զօրութիւններ-
ըն անգոռնելով: Այս տարի գոհ պի-
տի ըլլան եթէ տակաւին պատերազ-
մի կարելի եղած երկու ամսոյ մէջ կա-
րենան Օսմանեան բանակներն հեռա-
ցընել Պուրպարի մէջէն, և Պալքանի
կիրճերը պահել որք իրենց աչք տըն-
կած դանձուն բանակներն ըլլալով չը
պիտի ուզեն գիւրութեամբ թողուլ,
գալ տարուան ձգելով Արիւնդուտը
սոյ և Կ. Պոլսոյ վրայ արշաւանքը: Սա-
կայն ասոնք բոլոր իրենց հաշիւներն
են, և եթէ Օսման փաշային, Սիւլէյ-
ման փաշային և Մէհմետ Ալի փաշա-
լին բանակները միանան, ինչպէս որ
կը յուսացուի, Ռուսը այն ատեն թըր-
նովան ալ թողուլ կրնան պարտաւո-
րել: Ինչ որ է, առայժմ Ռուսը պաշտ-
պանողական գրից վրայ անշարժ կե-
ցած են: Եթեմն զօրաբաժին, տա-
կաւին բանակի կազմակերպութիւն
չառնելով քաշելու վրայ են: ասոնցմէ
մի քանին դեռ Ռուսիոյ մէջ են, ու-
րիշներն ալ արադապէս Ռուսմանիա
լէն կանցնին: Ռուսը հարիւր հազար
հոգեւոյ պէտք ունին: Առաջին օգնու-

թիւները Դանուբն հասնելու վրայ
էին: Ռուսաց առաջին յարձակումը
նորէն Բլեյքուայի վրայ պիտի ըլլայ, և
առայժմ (Օսման փաշային վրայ կը հըս-
կեն և անոր շարժումներն արգելուլ
կը ջանան, բայց Օսման փաշային զօր-
քը մանր կուրներու մէջ ալ միշտ յաղ-
թական կընէ: Նիքոյա Մեծ դուքսը
Պուրպարէն կը գտնուի: Դաքսոքոյի
և Գրուսնէր զօրաւորներուն Բլեյքու-
յի առջև բռնած ամուր գիրքերուն
ետեւ կողմը: Տրակօփոքի զօրաբա-
նակը թրնովայի և Լօֆնայի մէջ տեղն
է, որպէս զի Լօֆնային Օսմանեանց
թրնովայի վրայ յարձակումն արգե-
լու: Լօֆնայի և Բլեյքուայի գծին վը-
րայ գումարուած Օսմանեան զօրքը
եթմանատուն հաղար կը կարծուի:

Ռուսը իրենց ձախ կողմն ալ պաշտ-
պանողական գիրք բռնած են: Դա-
քսոքոյի զօրաւորին Բլեյքուայի վրայ
քաշելէ առաջ ետ ձգած մետաւանե-
րով զօրաբանակին մէջ զօրաբաժինն
և թագաժառանգ մեծ դուքսին եր-
կու զօրաբանակները վաթսուն հա-
զար կը կարծուին: Բայց ասոր դէմ
Օսմանցիք ալ անկէ աւելի զօրութիւն
ունին, այս առաւելութեամբ որ Մէհ-
մետ Ալի փաշա կրնայ իւր զօրքերը
Ռուսմուգ Ռազլիւատ կամ Օսման-
Բազար գումարել: Ռուսմուգի պա-
շարուսն ալ, զոր Պուրքէի հեռագ-
րերը Բլեյքուայի ճակատամարտէն ա-
ռաջ կը ծանուցանէին, հիմա բոլո-
րովին անկարելիութիւն մ'է, և ա-
սոր համար պատրաստեալ Ռուս
զօրքերն ուրիշ կողմ դրկուցան: Ռուսմուգի Ռուսաց բանակը տակա-
ւին Լոմ գետին գծին վրայ է, բայց
իւր յառաջապահները թրնովէնքէն
Գաւրքէյոյ յառաջացան: Թագաժա-
ռանգ մեծ դքսին յառաջապահն-
րին երեքտասաներորդ զօրաբանակին
հետ Օպերթէնքէն Գէզալիէվա յա-
ռաջացան և Բազլիւատի առջև են:
Իսկ յիշեալ զօրաբանակին առաջին
զօրաբաժինն Օսման-Բազարի և Թըր-
նովայի մէջ է, և յառաջապահները
Ռօլօրէվաք գիւղը կը գտնուին:

Ձիւնէրման զօրաւորը Մէհմուդի
կողմերն է, և երսուն հազարի չափ
զօրք Տօպրուճայի դաշտը Վարնայի
և Սիլիսթրի Օսմանեան զօրութեանց
դէմ պաշտպանելու պիտի աշխատի:
Իսկ յիշեալ ամրոցներուն սպառնալու
անգամ անկարող է առայժմ:

Ռուսաց բանակին առողջական վի-
ճակն ալ լաւ չէ՝ նպարներուն անկա-
նոնութեան, արագ արշաւանաց և
օգնութեն չընտելութեան պատճառաւ:
Ասկէ զատ՝ Ռուսը առողջապահու-
թեան ամենէն պարզ օրէնքներն իսկ
զանց կընեն: մեռած կենդանիներու
գիւղերը կամ մարմնաձգ անտանոց
փորոտիքը չեն թաղեր: Վերջապէս
բանակին բոլոր ապականութիւննե-
րէն օգը կը թունաւորի և զօրաց մէջ
հիւսնդութիւն կը ծաւալի, առանց

'ի բաց առնուլ կայսեր անմիջական
ծառայութեան մէջ գտնուող անձինք,
որոցմէ հինգ զօրաւորէն չորսը հի-
ւանդ և մին միայն առողջ է եղեր:
Իկնաթիւզ զօրաւորն ալ ծանր հի-
ւանդ է ստամբքսի չեւոյթ: Կալիցին
իշխանն ալ միւսնոյն հիւանդութեամբ
պառկած է: Այս հիւանդութեանց
պատճառը պատերազմին հոգերն և
և բանակին անտաների դարչահոտու-
թիւններն են:

Եւրոպական լրագրիք Բլեյքուայի
Ռուսաց պարտութեան վրայ Պուր-
քէի և ուրիշ տեղերու մէջ տիրած
սարսափը նկարագրելէ չեն դադարի:
Տէյլի Նիւզ լրագրին թղթակիցն, որ
ճակատամարտին ներկայ գտնուելէ
ետեւ Պուրքէյ գնացեր է, խիստ սըր-
տաշարժ կերպիւ կը ծանուցանէ ան-
համար վիրաստերոց ցաւալի վիճակն
և Դաքսոքոյի զօրաւորին խորին տըրտ-
մութիւնը: Զօրաւորը գրեթէ իւր
բոլոր բանակը կորուսանելով՝ միակ
մնացած և մեծ տիրութեան մէջ ըն-
կըղմած էր, պատերազմի դաշտէն
քանի մը խումբեր միայն եկան, կո-
րովի և գոռ բանակին մը մնացորդ-
ները: Դաքսոքոյի իբրև արձան կե-
ցած էր տակաւին, երբ Օսմանեան
թիւղանօթներուն և հրացաններուն
որոտմունքն երթալով կը մօտենային,
և գնդակներ կը տեղային իւր բոլոր
տիրքը: Վերջապէս ստիպուեցաւ ետ
քաշուիլ: Փախտաւանները Ձիւնէր-
մայի մէջ այնչափ ահուգոյ ձգեցին,
որ բնակիչք՝ «Թուրքերը, Թուրքերը,
Թուրքերը կուգան», պօռալով նա-
ւակները կը նետուէին Ռուսմանիա
փախչելու համար, և ոմանք գետն իյ-
նալով կը խղճուէին: Կամուրջներն ալ
լցուած էին: Գողթարներէն ոմանք
Ձիւնէրմայի մէջ մնացած Գաւրքէյ
պատգամաւորները զրկելով կը խղճե-
րէին որ եթէ Օսմանցիները գան՝ զե-
րենք պաշտպանէ: Իսկ Ռուս սպայք
և զօրաւորք գումարուելով կ'երդ-
նուին որ մինչև վերջին շունչ կուրին,
և եթէ վերաւորուին, Պաշապօղուգ-
ներու ձեռք չիլնալու համար՝ զիրար
մեռցնեն:

Գաղղիական թան լրագրին թըղ-
թակիցն հետեւեալ երկրորդ նամակը
գրած է իշխանայ վանքէն, ուր Վեհ-
կաթողիկոսին հետ ըրած տեսակցու-
թիւնը կը պատմէ:

«Իշխանին 22 յուլիս.
«Հայոց մեծ Պատրիարքն իմանա-
լով որ Գաղղիացի խմբագիր մ'իշխա-
նին գալով իւր յարգանքը մատու-
ցանել կուզէ. Ն. Սրբազնութեան, կի-
րակն առաւօտ պատարագէն վերջն
իմաց զրկեց ինձ թէ պատրաստ էր
զիս ընդունելու: Գեորգ Դ. ի հետ
ունեցած տեսակցութիւնն կարժէ որ
պատմեմ ձեզ:

«Երկու կարմրագլէս բարա-

պանք, որք Պարսից իշխանութեան
ժամանակ իշխանայ միաբանու-
թեան տրուած ինչ ինչ արտօնու-
թեանց պատճառաւ շուրջ կըլուզուին,
զիս կաթողիկոսին բնակած յարկը
տարին: Յետոյ կարգ մը պատու-
հաններով լուսաւորեալ երկայն դահ-
լիճ մը մոյցուցին զիս, որոյ ծայրը
թուղթերով ու գլխաւորով լի փոքր
սեղանի մ'առնէ երկայն թիկնաթուղթ
(քանաքէ) մը վրայ Մեծ Պատրիարքը
նստած էր: Փոխանցալ ձեռքն համ-
բուրել, նա ալ ըստ սովորութեան՝
վրաս խաչակնքելով իւր օրհնութիւնը
սուաւ ինձ, յետոյ աղաչեց որ նստիմ:

«Եւ որովհետեւ Մեծ Պատրիարքը
Գաղղիերէն չհասկնար, պահ մը լու-
թիւն տիրեց: Այս միջոցէն օգուտ
քաղելով զննեցի զինքը: Գեորգ Դ.
պատկաւելի տեսլանով եկեղեցական
մ'է. գէմքին ստորին մասը շրջա-
պատեալ է ալեխաւն փառահեղ մո-
լուքով մը, որոյ ծայրերը մինչև գո-
տին կիշնեն: ճակատը բարձր է, և
մեծ հանճար ցոյց կուտայ: ալուրնե-
րը լի են կենդանութեամբ և խորա-
գիւտութեամբ: Լայն վերարկու մը
հագած էր մանիշակաղցոյն զարդե-
րով, գլուխն ալ թաւշեայ խոյր մը
գրած էր նոյնպէս մանիշակաղցոյն:

«Ընծայարանի դասատուներէն
մին կանչեցին թարգմանութիւն ընե-
լու, և խօսակցիլ սկսանք: Ըսի թէ
Հայոց աղղին վրայ համակրութիւն
զգալով, և իր բնական գեղեցիկ ձեւ-
քերը զարդացնելու համար ըրած ջան-
քը տեսնելով՝ բարեբաղդութիւն կը
համարիմ ինձ Հայոց ամենամեծ մա-
սին հոգեւոր գլուխն ողջունել: Կա-
թողիկոսը պատասխանեց թէ շնորհա-
կալ էր իմ այս զգացումներէս, և թէ
չատ ուրախ էր որ զիս առաջին մար-
դոյն բնակած երկրին մէջ կը տեսնէր:

«Այս պատասխանն, որ մեր խօ-
սակցութիւնն Հայոց աղղին ներկայ
վիճակին վերաբերեալ խոյր ողջ վրա-
յէն մեղմով հեռացնելու նպատակաւ
հաշուեալ խօսք մ'երեւցաւ ինձ, քիչ
մը շփոթեցուց զիս: և խոնարհաբար
խոստովանեցայ թէ Դրախտին աշ-
խարհագրութեան վրայ ունեցած դա-
շտաւորներս ուղղուելու կամ լրանա-
լու մեծ պէտք ունէին: Հարցուցի թէ
Աստուածաշնչին եղեմը ճշդիւ ո՞ր
կողմ էր, և Ագամ նախաձայն ալ ո՞ր
տեղ ծնած էր: Պատասխանեց թէ
փափուկ խնդիր մ'է այս, որ երկար
ժամանակ վիճաբանութեան նիւթ ե-
ղած է ստուածաբանից մէջ, բայց,
ըստ ամենայն հաւանականութեանց,
Եղեմայ դրախտին տեղը Մշոյ կողմը
պէտք է փնտռել, ըսաւ, վախայ ծո-
վակին արեւմտեան կողմը:

«Հոս քիչ մը լուռ կեցանք, յետոյ
իշխանայ մէջ գտած հիւրընկալու-
թեանս համար շնորհակալութիւնս
յայտնեցի:

«Օ՛ր պատասխանեց իսկոյն կաթուղիկոսն, ընդհատուածն՝ կր վախճում որ պէտք եղած հանգստութեան կէտքն իսկ չկրցար դնել մեր վանքին մէջ: Ես պէտք եղած հրամանները տուի, բայց ի՞նչ ընեմ: Մեր հոս պարզութեամբ կապրինք: Սակայն ես մեծ քաղաքի մէջ ծնած ըլլալով, գիտեմ թէ օտարազգի հիւրաց պատիւ ընելու համար շատ բան կը պակսի մեր այս փոքրիկ գիւղին մէջ: Ես երբեք չեմ հասկնալ, որ Պօլիսը — Ոչ, Ս. Հայր: — Խորհարդ կուտամ ձեզ սրեր թաք առնել:»

«Պատասխանեց թէ իմ պարտականութիւնս զիս Ռուսաց բանակին կապած էր, և եթէ երբեք Պօլիս կր թաք առնէր մը գտնեմ, կարնայ ճանթով միայն կրնայ ըլլալ:»

— Բայց ես չեմ կարծեր, ըստեմ իմ խոսքով, թէ Եւրոպական տէրութիւն մը երբեք Պօլիս առնելու կամ գտնելու հոն պետեղանք խորհուրդ մտքէն անցունէ: Ձեր կարծիքն ի՞նչ է:

— Իմ կարծիքս այս է, որ եթէ երբեք չեղարկուին, լաւ բան մը կը ըլլայ: Բայց ի՞նչպէս երբեք չեղարկուին խօսք մը:

— Արդարեւ գործնական միջոց կը մնայ գտնել:

«Խօսակցութիւնը նորէն օրին ընթացք մ'առաւ, և ես քանի մը հարցումներ ըրի կաթուղիկոսի և Գրիգորիան հաւատաց մէջ եղած տարբերութեանց վրայ: Մեծ Պատրիարքը բացատրեց ինձ թէ Գրիգորեանութիւն բաժնի օր օտարազգի եաց կողմէ կը գործածուի, Հայոց համար նըշանակութիւն չունի: Թէ աշխարհի վրայ մէկ Հայաստանեայց եկեղեցի մը կայ և քանի մ'ալ անկէ հերձեալք: Թէ այս եկեղեցին իրեն գլուխ կը ճանչէ միայն զՅիսուս—Քրիստոս, և Հոգին սուրբ ալ ի Հօրէ միայն բղղիւնալ կը գտնուի:»

— Ժամանակաւ, յարեց կաթուղիկոսն, Հռոմի հոս այսօրուքն առնելի ներս յարաբերութիւն ունենք: Մինչև իսկ մեր Մայր եկեղեցւոյն մէջ ամբողջ մը կայ, որ Հռոմի Պատրիարքին մին ընծայած է իմ նախորդներէս միայն: Բայց Հռոմի եկեղեցւոյն մէջ հետզհետէ մտած երբեք պարզապէսութիւնը այս վիճակը փոխեցին և ուրիշ շատ փոփոխութեանց ալ պատճառ եղան:

«Ուրիշ այլ և այլ նիւթոց վրայ ալ խօսեցանք, ընդ որս և Միտհակ վաշայի Սահմանագրութենէն առաջ հաստատեալ Հայկական Սահմանագրութեան վրայ, որ Գեորգ Գի գործըն է:»

«Մեծ Պատրիարքն իւր լուսանշար պատկերն ընծայեց ինձ՝ իւր ձեռքով գրած ուղերձով մը: Ցաւեցաւ որ չէր կրնար վանքին դրատունը բանալ ինձ, ուր հազուադէպ ձեռագիրք կը գտնուին, կըսեն, բայց դուք պատ հիւսուած էր: Ըստ թէ չվախեցիր որ թուրքերը վանքը կը կողոպտեն, եթէ մինչև հոս գտնայ միայն ուղղութիւններ կորսնցնող թնդանօթի ուսման երէ կը վախանայ:»

«Սակայն ասոր փոխարէն արտօնութիւն առաւ ինձ Մայր եկեղեցւոյն դանձր տեսնելու, ուր հայրապետական գաւազաններու հաւաքածոյ մը կայ, մեծ մասն Հնդկաստանի՝ կամ Պարսկաստանի մէջ շինուած, խիստ թանկագին և սքանչելիքներու: Վերջապէս Մեծ Պատրիարքն ազատեց ինձ որ իրեն հիւր

ըլլամ: Եւ որովհետեւ ինքը թիկն անհանգստութիւն մ'առնեալուն պատճառ չէր կրնար ձաշարան իջնել, խնդրեց որ եպիսկոպոսոց հետ ճանչնամ:»

«Վաճարձ եպիսկոպոս, Գեորգ Գի անձնական քարտուղարն և միանգամայն իրարու անուն կրօնական թերթի խմբագիրը, զիս պատուաւրեց ի սեղան: Երիտասարդ մարդ մ'է, ճակատը ժամանակէն առաջ կը պայծառ: Գեորգ Գի, մարտը սեւ, իսկ ինքը սառնակ տշխոյժ: Առաւել կը սիրէ քաղաքական և զինուորական նիւթոց վրայ խօսիլ: Զան թէ Նոյայ տապանին վրայ: Օրմանեան հարատակ է, և մեզ ամենքս զուարճացնող ազգութեամբ մը յայտարարեց թէ Օրմանեան հայատականութենէ զատուի չուզեր երբէք: Բէշլիմալձեան Յօհանէս վարդապետ ալ՝ որ Պարսից հայտանի է եղեր, նոյն յայտարարութիւնն ըրաւ տեսակ մը պարսկական հայրենասիրութեամբ:»

«Ձեզ ճիշդ և անկողմնակալ տեսնութիւններ տալու համար հոս եկած ըլլալով, իմ պարտականութեանցս գէժ մեղանշած կըլլամ թէ ներկայ պատերազմին նկատմամբ Օրմանեան Հայոց դժբախտ վրայ ալ ճշմարտութիւնը չձանուցանեմ ձեզ: Օրմանեան Հայաստանի Հայոց մտքէն բնաւ անցած չէ Ռուսերն իբրեւ ազատարար ընդունել: Ընդհատուածն այս պատերազմին չբացուիլը կուզենին: Կովկասեան գաւառաց Հայերն, իրենց նախնիները ունենալով միշտ վրայիներն ու թաթարները, գոհ կըլլան և կը պանծան տեսնելով որ իրենց ազգակիցներէն մին կովկասեան գլխաւոր զօրաբանակին, ուրիշ մ'ալ Երեւանի զօրաբանին հրամանատար կարգուած է: Այս զգացումն օտար է թուրքի Հայոց: Անոնց փայլը չէ զիստալ թէ Լորիս Մեյրքոֆ և Տէր Ղուկասօֆ զօրապետաց մայրերն ինչու չէ Հայերէն է: Այս ժողովուրդներն անշուշտ թուրքաց կառավարութենէն դանդաղաբար պատճառներ ունենին, բայց իրենց կրած նկատութիւնները բան մը չէին պատերազմին երեսէն կրած տառապանաց քով:»

«Այս միջոցիս էմիսանայ պարսկական շուրջ խղճարի Հայ ժողովրդեան բազմութիւն մը կայ, որք Տէր Ղուկասօֆ զօրավարին յետնահանջած ժամանակ ետէն գալու պարտաւորուեցին, և հիմա առանց ապրուստի և ապաստանարանի՝ վանքին վրայ ծանրացած են: Հազարէն աւելի Հայ ընտանիք այսպէս հոս գաղթած են, և խրաւովիս ապաստանող Պոնտացոյ պէս երկրին այլ և այլ գիւղերը բաժնուած: Այս տարաբաղդները Գրգոց ան: Գլխաւորութիւններէն ազատ մնալու համար Ռուսաց հոգն ապաստան փնտրուելու եկած են: Բայց կը յայտնեն բարձրագոյն թէ պատերազմէն առաջ այդ փոխաբերուեալ հետ լաւ կը կենակցէին, և թէ իրենց թշուառութեան թուականը Ռուսաց Օրմանեան հոգը մանկէն կ'սկսի:»

«Այսպիսով եպիսկոպոս տեսայ, որ իւր վիճակին գրեթէ բոլոր բնակիչաց հետ հոս փոխած է: Գլխաւոր տեսարան մ'էր տեսնել այս ցլու վիզով և լայն ուսերով հոգեւոր մարդն, որ ջնքմէ բռնուած կը գործար, և օգին անտանելի տաքութեան հակառակ մուշտակի մէջ փաթթուած էր: Իւր սրբալի պատմութիւնը մեզ պատմեց:»

«Փոխաբերուեալ զխաւարներն, ըստ բարեկամ էին ինձ և մեր վանքը կը պաշտպանէին: Ամենքն ալ

պաննուեցան: Կրնաք հասկնալ թէ այն վարկերէն վախճալ սկսածք անոնց բնկերներուն վրիժառութենէն և երբոր Տէր Ղուկասօֆ մեկնեցաւ մեր երկրէն, հարկադրեցանք մեք ալ անոր հետ մեկնել: Երանի՜ թէ երբէք եկած չըլլար մեր երկիրը, կամ աւելի առաջ իմացուցած ըլլար մեզ: Բաներ կան որ չեմ ուզեր ըսել: Բայց Ռուս անկախներն ալ փոխաբերեալ վար չեն մնար: Եւ մեք այնչափ վատ կրնայինք Լեզկիներէն՝ որչափ ուրիշներէ: Եւ հիմա, տեսէք, ըստ եպիսկոպոսի՝ պատուահանին լուսամուտէն ցուցնելով այն տխուր տեսարանն որ երկու օրէ ի վեր աչացաւ ինչ էր, մեք տեսնելու աւարտելու չէինք, անոնցմէ բան մը չէ մնացած մեզ: Մեր տուարներն հետեւին իր բերած էինք, գրեթէ ամենն ալ աւելի մեր ձեռքէն: Ո՛հ, Աստուած իմ, Հայերը պաշտպան չունին:»

«Այս ըսելով խեղճ մարդն արտաստաց խոշոր կաթիլներ թափելով լալ սկսաւ: Պահ մ'իւր սրտին յագմանքը զսկսեալ ճիշդ թափեց, բայց չկրնար ձգեց դուրս ելալ՝ գոհակալ տալու թուական մը ներքին թողլով զամենքս ալ:»

«Երբ արտասաց իման իւր անձնական գաղղիներէնով հետեւալ բարոյական հանց այս ամենէն՝ «Ի՞նչ զարմանալի բան է այս: Բռան ու ու թուրքը կը կուտին, Հայը կը կուտին:»

«Հարկը լուսնի գրուեցայ էջմիածնայ վանուց տեսարանին մէջ, որպէս զի Թան լրագիրն ալ համետ գումարով մը մեծ թշուառութիւններ տիրելու մասնակցի:»

«Հայերը պաշտպան չունին: Զայս կը կրկնէր ինձ այս իրիւն Սարգիս եպիսկոպոսն ալ: Ես փոքր փորձեցի յաւաքել զինքը Ռուսիոյ վրայ խօսելով: Սարգիս եպիսկոպոս Եւրոպայի ներկայ վիճակն ըստ բաւականի ճանաչող անձ մ'է: Բայց վարդապետը՝ ժամանակակից պատմութեան այնչափ տեղեկութիւն չունեալով՝ անձկութեամբ կը հարցնէր: «Արդեօր Գաղարիս բան մը չկրնար ընէ մեզ համար: Բարեմիջ վարդապետ: Իսկայն ձեռքը սեղմեցին: Ասոր պէս շատերու հանգիստեցայ: Ես ստուգիւ նշանուոր բան է: Գաղղիս Հայոց աչքին վիճակն թեման և միանգամայն զօրութեան տիրար մնացած է միշտ: Երբոր իմ խեղճ Հայր Բէշլիմալձեան բարեկամս հասկցուց թէ մեք բաւական ընկերներ ունենինք ինքզինքնիս պահպանելու համար և ուրիշները մտածելու ժամանակ չունենինք, դու խոստարհեցայ իրեն ընկճեալ: Ես ալ գնացի տանիքին վրայ պառկելու, ատենդաղարդ երկիրը դիմելով այս րարի մարդոց, որ այսպէս պարզմտութեամբ և ի խոր սրտէ մեր հեռաւոր երկիրը կը սիրեն:»

«Պարզանի Օրմանեան բանակին հըրամանատար Սիւրէյան փաշայէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ իւր զօրքերն աւելոյ 9 ին երեքշաբթի օրը Շիրաքայի կիրճը բռնող Ռուսական զօրաց վրայ յարձակելով 14 ժամ շարունակ սաստիկ պատերազմներ են, բայց Ռուսք Շիրաքայի դիրքը խիստ զօրեղ կերպիւ տնայնացած և բազմաթիւ մեծամեծ թնդանօթներով զինած ըլլալով, անձրիի պէս ուսմի և գնտակ տեղողներ են կայսերական զօրաց վրայ, որք թէ եւ քանիցս բռնեն յարձակմամբ թշուառաց տնայնայնայն մէջ մտնեն են, բայց մեծ թնդանօթներ չունենալուն պատճառաւ չեն կրցեր

դուրս ել, ուստի ես քաշու եր են, հետեւ եալ օրը քանի մը խոշոր թնդանօթ բերել տարու և վերադառնալ յարձակելու որչափով: Սակայն սոյն երկրորդ պատերազմին վրայ մնել և այսօր լուր մ'եկած չէ:»

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Պեքթէշ 23 օգոստ.

Ռուսիոյ կայսրն, որ հեռանդ է, Ռուս մանկոյ կառավարութեան առաջարկած պայմանները մերժեց:

Բեդրասպուրկ 23 օգոստ.

Կայսեր մէկ հրովարտակը չորրորդ վաչա մը կողմէ կը հրամայէ երկաթուղեաց համար:

Վիեննա 23 օգոստ.

Պերլինէն հեռագիր մը կը հաստատէ Օրմանեան դեպքերն զահաժառանգ իշխանէն տեսած բացառիկ ընդունելութիւնը, որ Բոցտամի երկաթուղեայ կայարանը դիմաւորութեան գնաց անոր: Արդէն Պիտարք իշխան ալ ամսոյս 21ին այցելութեան գնացած էր Օրմանեան դեպքերն:

Այս բանը մեծ տպաւորութիւն ըրաւ:

Մատրիտ 24 օգոստ.

Մարդի գեապոսը վաղը Մատրիտ կ'ապաստի:

Լոնդոն 24 օգոստոս.

Օսմ. Գոստ.	9 9/16
Փոխ. 1865	9 3/4
1869	9 5/8
1871	37 3/8
1872	17
1873	9 1/2
Եղիպատ.	37
Անգլ. Գոստ.	9 3/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախորդ Սերտար-Էրբէմը, պատերազմական գործող նախարարն և ուրիշ զինուորական հրամանատարներ գաւառու պաշտօն ունեցող պատերազմական առեւտրի հինգ շարժի օրը գումարուելով, Սերտար Էրբէմ Ապտիւլ Գէրիմ փաշան առաջին անգամ ներկայացաւ, և հարցաքննի սկսաւ:

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ կայսերական կառավարութիւնն Օսմ. երեսփոխանական ժողովոյ որոշման համաձայն կառավարութեան պաշտօնակից թիւը պակսեցնելու գաւառ, հանգստեան ամսականներն ալ շնչելու ձեռնարկած է:

Վաղը՛ լրագիրք կը ծանուցանէ թէ յասնիկայ Բամադանին առթիւ մէկ մէկ ամսական պիտի տրուի պետութեան թուր պաշտօնէից:

Սթամպուլ անուն թերթին, որ յաճախ սուտ լուրեր տարուեալ պատճառաւ անհամաձայնարար դադարած էր, ներում ստանալով վերստին հրատարակել սկսաւ:

Մինչև հիմա բռնուած Պոլլար լրտեսաց թիւը, կըսէ Թէրէմանը Էֆքեար լրագիրն 2800 ի կը հասնի, որք գաւառէն ետեւ Ալիբիկան Տըրիպոսայ Ֆէզան գտաւ ալ իսկ տքսարուին:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

12 օգոստ. ուրբաթ իրիկուն	10.15
13 օգոստ. շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	10.18
ժամ 6 ին	10.16
Բուժարի երկաթուղի	Փր. 28
Թղթագրամ	Փր. 178 1/2

ԸՆԹՈՑՔ ԱՐԺԵՐԹՈՑ
Կ. Պօլիս 12 Օգոստոս
Ստիքթէ յիշերալի բաժ. Անգլ. մը. 3. 5
Փոխանական 1.32
Կ. Գրաց Պանքային 2.28

